

Թիւնը . . . և եթէ նա այս բառերից չի եզրակացնի թէ հեղինակը մաքառում է նեղ հայեացքի դաստիարակութեան դէմ թէ մասնաւորապէս նա ի նկատի ունի անցեալ ժամանակի ուսուցման ինչ ինչ յատուկ անպիտանութիւններն ու պակասութիւնները, ինչպէս զոր օր. մարմնական կրթութեան, զեղաբուսական կամ վսեմ քաղաքավարութեան մասին անհոգութիւնը և այլն, — նա ուրեմն կարգացածի իմաստը խոր չի ըմբռնել. կամ եթէ նա Աւետարանի մէջ կարդում է. «չին յորժամ ծնանիցի՝ տրամութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնկողութիւն վասն խնդութեան, զի ծնաւ մարդ յաշխարհ» և եթէ այս տեղից չի հանում այն հոգեբանական ճշմարտութիւնը, թէ նախընթաց չարչարանքը այնպիսի նորոգ կեանք է ստանում ուրախութեան մէջ, որ այնուհետեւ յիշողութիւնից ջնջուում է, — նա ուրեմն ընթերցանութիւնից շատ չի օգտուում: Թող աշակերտը ամիսը գէթ մի գիրք սովորէ այսպէս կարգաւ և այնուհետեւ ընթերցանութիւնը նորա համար կեանքի մէջ արդարեւ ուսման շարունակ աղբիւր կը դառնայ:

Գաղով բառարանների և միւս ուսումնական պիտոյքների գործածութեան, պէտք է միշտ համբերել, մինչև որ աշակերտները պահանջ չգան, պիտանութիւնը և խորհուրդը ըմբռնեն, և ապա թէ սկսեն գործածել: Եւ որպէս զի աշակերտի ճաշակն հենց սկզբից չաղաւաղուի, մենք աւելի բարեւոք կը դատենք, որ նա փոքր ինչ աւելի աշխատէ և սկսէ շտապը Բիւզանդացու նմանները գործածել, քան մեր ռուս — հայերէն բառգրքերը:

Ի լրումն այս ամենայնի, հարկ ենք համարում աւելացնել, որ այս յօդուածի գրութեան առիթ դարձաւ անցեալ տարուայ „Образование“ ամսագրի № 4—5-ի մէջ զետեղուած Фену-ի О преподаваніи иностранных языков յօդուածը: Մենք այս նիւթի մասին առաջին անգամ չենք խօսում, բայց և այնպէս ցանկալի է, որ ընթերցողները ուրիշներից էլ իմանան, թէ նոքա ինչ են ասում օտար լեզուի դասատուութեան մասին, թէպէտ և նոքա ասածը ինչ ինչ տարբերութիւններ ունենայ մերինից:

Մեր գլխաւոր ձգտումն էր բացատրել թէ մեր աշակերտները տարեցատրի սովորութիւն են անում կիսատ հասկացածով զոհ մնալ և մոքով թմրել, իսկ որովհետեւ կիսատ հասկացածը կարելի է լաւ արտայայ-

տել, նոքա պէտք է սովորին նաև անկատար և շփոթ կերպով խօսել ու գրել, նոքա ուրեմն ոչ մտաւոր պաշար են ստանում և ոչ լեզու, եղած լեզուն էլ՝ ոչ հայերէնը հայերէն է և ոչ ռուսերէնը ռուսերէն: Այս ցաւերին դարման պէտք է դանել:

Ս. Մ.

ԺԱՆՏԱԽՏ.

Ա.

Ժանտախտը յայտնուել է Հնդկաստանում անցեալ 1896 թուի նոյեմբեր ամսին և հետզհետէ աւելի զօրանալով, այժմ իւր վրայ է դարձրել Եւրոպայի ուշագրութիւնը, Ժանտախտի համաճարակները եղել են և հին ժամանակներում. Բրիտոսի ծնունդից առաջ, նրա կատարած աւերումները սաստիկ մեծ են եղել մանաւանդ միջին դարերում պատահած համաճարակների ժամանակ, երբ զոհուել է ժողովրդի քառորդ մասից աւելին, Եւրոպայում եղած համաճարակներից նշանաւոր է 14-երորդ դարու համաճարակը, որ յայտնի է «սե մահ» անունով և որ տարածուելով ամբողջ Եւրոպայում՝ բոլոր ազգերին ձգել էր սարսափի և յուսահատութեան մէջ, Սկսած ներկայ դարու կիսից Եւրոպան աղաւթ է եղել ժանտախտից, բայց 1878—1879 թուին քիչ էր մնում, որ սոսկալի թշնամին նորից սկսէր իւր արշաւանքը Ալգայի ափերից, Արեւելքում այդ հիւանդութիւնը նոյնպէս սկսել էր ուշ ուշ երեւալ, թէև երբեմն պատահում էին մանաւոր համաճարակներ, Ժանտախտի հայրենիքը համարուում է Հնդկաստանը և արևմտեան Ասիան:

Ժանտախտը մի երկրում տարածուում է և մեծ ծաւալ ստանում, եթէ այդ երկրի ժողովուրդը աղքատ է և ապրում է անմաքրութեան և կեղտի մէջ, Ցարուայ եղանակը, կլիման, հողի չորութիւնը կամ թացութիւնը մի առանձին նշանակութիւն չունին այդ հիւանդութեան տարածուելու վերաբերմամբ, Մի անգամ ժանտախտով հիւանդացողը չէ կարող յուսալ, որ նա երկրորդ կամ երրորդ անգամ չի հիւանդանայ, թէև երկրորդ անգամ հիւանդանալու ժամանակ հիւանդութիւնը աւելի թեթեւ է լինում:

Ժանտախտը չէ նայում մեծ ու փոքրին կամ տղամարդկանց ու կանանց. դրանք բոլորն էլ հաւասարապէս ենթարկվում են այդ հիւանդութեանը, մինչև անգամ հիւանդանում են երեխաները իրանց մօր արգանդում:

Ժանտախտով հիւանդին մօտենալը չէ կարող վարակիչ համարուել, բայց ոչ մի կասկած չկայ, որ հիւանդութիւնը սաստիկ կերպով տարածուում է զանազան տեսակ առարկաների միջոցով, որ գործ

են դրել ժանտախտով հիւանդները. ուրեմն այդպիսի իրեղէնները պէտք է ոչնչացնել: Այդ խիստ միջոցին դիմեց ռուսաց կառավարութիւնը 1878 և 1879 թուին Աւստրիական աւանում (Հաշտարսանի նահանգում) յայտնուած ժանտախտի վերաբերմամբ. հանգուցեալ կոմս Լօռու Մելիքեանը, որին յանձնուած էր համաճարակի տարածման առաջն առնել, տէրութեան հաշուով այրել տուեց գիւղի տները իրանց բոլոր կահկարասիքով՝ զիականների հետ միասին, ժանտախտի առաջն առնելու ամենազխտաւոր միջոցը մի երկրի առողջապահական տեսակէտից բարուրդումն է. հիւանդութիւնը տարածուում է դանդաղ կերպով, և զոհեր է որոնում զխաւորապէս այնտեղ, որտեղ ժողովուրդը բազմաթիւ է, բնակուում է խիտ առ խիտ, և առողջապահական կանոններին ծանօթ չէ, և Եւրոպայում, որտեղ ժողովրդի բարեկեցութիւնը և մաքրութիւնը աւելի բարձր է և համաճարակները առասպելների շարքն անցել, այնտեղ ևս սակայն այժմ երկիւղ են կրում: Իսկ մենք, որ ունինք այնպիսի դրացիներ, ինչպէս են Տաճկաստանը և Պարսկաստանը և միւս արեւելեան երկիրները, որոնք ամենայն տեսակ վարակիչ հիւանդութիւնների բոյն են, պէտք է աւելի ևս երկիւղ կրենք և աւելի ուշադիր լինենք հասարակաց առողջապահական վիճակի վերաբերութեամբ: Մեր քաղաքները և գիւղերը յայտնի են իրանց հազառողջական դրութեամբ, Նրանք ունեն գարշահոտութիւն բուրոգ մասեր և առողջապահական պահանջների վրայ նահապետական հայեացքով են նայում. մեր գիւղերում ժողովուրդը արտաքինոցի պահանջ չունի՝ այդ նպատակի համար ծառայում են իրանց բնակարանների կոտորները և բակերը:

Թէ որքան մեծ նշանակութիւն ունի այդ տեսակ քաղաքների և գիւղերի առողջապահական տեսակէտից բարուրդը, այդ արդէն պարզ ցոյց տուեց մեզ այն փաստը թէ, ինչպէս անօր—Վոնդում 1894 թուի ժանտախտի ժամանակ, այլ և այժմ Բօմբայում, այդ քաղաքների մաքուր մասերում, որտեղ ապրում են Եւրոպացիները, ոչ ոք կամ շատ քչերն են հիւանդացել. իսկ այն քաղաքամասերը, որտեղ բնակուում են չինացիները և հնդկիները, և որոնք լի են անմաքրութեամբ, գարշահոտութեամբ ճահճային և այլ գոլորշիներով, այնքան սաստիկ է ժանտախտի կոտորածը, որ առաջարկուել է արմատական ծրագիր՝ այն է ոչնչացնել այդ քաղաքամասերը կրակով:

Բ.

Նորերս բակտերիօլոգիական լաբորատորիայի կառավարիչ գոկտոր Պետրին տպել է Բերլինի „Medicinische Wochenschrift“ բժշկական լրագրում մի յօդուած, որտեղ հաւաքուած է այն բոլորը, ինչ որ վերաբերում են ժանտախտին և նրա դէմ կռուելու

լու միջոցներին: Քաղում ենք այդ յօդուածից մի քանի նորագոյն տեղեկութիւններ. — Կան ժանտախտի երկու զխաւոր կենտրոններ, մէկը 2ինաստանի Իւնան անունով երկիրը, միւսը Փոքր Ասիան, Միջագետքը, Պարսկաստանը և Արաբիան, Այդ երկրներից շատ անգամ ժանտախտը տարածուել է Եգիպտոս և Հնդկաստան, Աւելի երկիւղալի է ժանտախտը այն երկրների համար, որոնք մինչև այժմ բաղդի բերմամբ ազատ են եղել այդ հիւանդութիւնից, Թէև Եւրոպան երկար միջոց է ազատ է եղել այդ սոսկալի թշնամուց, բայց պէտք է աչքի առաջ ունենալ, որ եթէ ժանտախտը հասնի մեզ, նա կարող է ընդունել չափազանց երկիւղալի բնաւորութիւն, Այս պատճառով ուշադրութեան արժանի են այն միջոցները, որ առաջարկում են գիտնականները ժանտախտի դէմ մաքառելու համար, Հետաքրքրական են ճապոնական պրօֆեսոր Սիտադատոյի հետազոտութիւնները, ժանտախտի բացիւնները քիմիական և ֆիզիքական միջոցներով անվնաս դարձնելու մասին: Զորացնելը բացիւններին սպանում է երեք—չորս օրուայ ընթացքում, իսկ արեգակի ճառագայթների անմիջական ազդեցութեան տակ բացիւնը կորցնում է իւր կենդանութիւնը երկու օրում: Մի տոկոս կարողեան թթու պարունակող ջրի խառնուրդը սպանում է բացիւն մի ժամում, կէս տոկոսը երկու ժամում: Եւս աւելի ուժեղ կերպով ազդում է կրային ջուրը, որից բացիւնը սպանուում է մի քանի րոպէի ընթացքում: ճապոնական պրօֆեսորի այդ հետազոտութիւնները սկիզբն են դնում ժանտախտի դէմ մաքառելու այն եղանակներին, որ պէտք է լինի ախտահանութեան միջոցով: Գոկտոր Պետրին ասելով համարեա բոլոր Եւրոպական պետութիւնները գիմում են առանձին միջոցների ժանտախտի տարածման առաջն առնելու և նրա հետ կռուելու համար, իսկ Անգլիան դարձեալ հետևում է իւր նախկին առանձին կարծիքին. Բրիտանական կառավարութիւնը համոզուած է, որ այն ամեն միջոցները, որ մշակուած են Անգլիայում խօւրբայի և դեղին տենդի դէմ, բաւական են և ժանտախտի դէմ կռուելու համար:

Գ.

Ժանտախտը վարակիչ սուր հիւանդութիւն է, որով բորբոքուում են թէ ներսի և թէ դրսի աւալային խուլերը, որոնք հակումն ունին վահարակալելու, Հիւանդի արտաքին տեսքը շատ անգամ նմանում է տիֆով հիւանդին, Ինչպէս բոլոր հիւանդութիւնները՝ ժանտախտը կարող է լինել թեթեւ, միջակ և ծանր տեսակ:

Թեթեւ տեսակի հիւանդները շատ անգամ ըզգում են իրանց այնքան քիչ հիւանդ, որ մնում են ոտի վրայ. հասկանալի է որ հենց այդ տեսակ

Հիւանդներն են, որ ամենից շատ նպաստում են հիւանդութեան տարածուելուն: Հիւանդութեան սկիզբը յայտնուում է նրանով, որ ժանտախտով բռնուածը ըստ մեծի մասին մի անգամ դողացնում է: Առաջ է գալիս զլխացու, փստումն և փորկապութիւն: Ժաժամանակ դորա հետ սկսում են ցուել և ուռել աւշային խուլերը աճուկներում, թեւերի տակ, ծնոտի տակ և վզի վրայ: 3—6 օրից յետոյ ուռած խուլերից մի քանիսը բսկում են ծակուել, նրանց միջից դուրս է գալիս փահր, յետոյ հիւանդը ստատիկ բրննում է և սկըսում է առողջանալ:

Միջակ տեսակի ժամանակ այդ երեւոյթները լինում են աւելի սաստիկ: Հիւանդի աչքերը լցուում են արիւնով: Շատ անգամ տեղի է ունենում ուշագնացութիւն և դառանցանք: Մարմնի տարրութիւնը բարձրանում է: Պաշուի վրայ դուրս են գալիս կարմիր բծեր և պտուկներ: Նոյնպէս և կարճատե ուռոյցքներ: Հիւանդը կամ մեռնում է 4—6 օրում, կամ առողջանում է 2—3 շաբաթուայ մէջ:

Ծանր տեսակի ժամանակ հիւանդների վրայ գալիս է սաստիկ տխրութիւն, բայց նորա ուշքները չեն կորցնում մինչև մահը: Հիւանդութիւնը այնքան սաստիկ և կարճատե է լինում, որ ժամանակ չի լինում ուռոյցքներ յառաջանալու: Սկսում է անվերջ փստումը մշտական կապութեան հետ: մէզը բոլորովին դադարում է: յետոյ յառաջ են գալիս արևան լուծման երեւոյթները: արիւնհոսութիւն կաշուից: ստամոքսից: աղիքներից: երկկամուրից և թոքերից: Թոքերից արիւն հոսելը յաճախ տեղի է ունեցել «սև մահ» անունով համաճարակի ժամանակ:

Ժանտախտով հիւանդացողների մահացման տոկոսը շատ մեծ է: Նա հասնում է 90—95% -ի: Կ. Տ. Խ.

ՄԱՆՐԱԼՈՐԻ:

Նորիքումս New Haven-ում յառաջ է եկել աղիքների տիֆի համաճարակ, որիս հիւանդացել են 100 հոգի: Զննութիւնը ցոյց է տուել, որ վարակման միջնորդը եղել է կաթը, որի ամանները լուսացուում էին ջրօրի ջրով: Իսկ լրճօրի մօտ հոգի վերայ մի քանի անգամ ածած է եղել տիֆով հիւանդների լուացքի չորը:

Ամերիկայի միացեալ Նահանգների թիշկների թիւը հասնում է 120,000-ի, իսկ քնակիչների թիւն է 75 միլիոն:

Լոնդոնի դքսութեան խորհրդին ներկայացրած, Claybury-ում գտնուող խնկագարների ապաստանարանի վերաբերեալ, հաշուի մէջ դրկտոր Ջոնս շօշափում է այն հարցը, թէ ինչպէս պէտք է որոշել սովորական հարեցողու-

թեան եւ հարեցողութիւնից յառաջացող խնկագարութեան սահմանը: Անգլիական օրէնքը հարեցողներին ազատ է թողնում, իսկ խնկագարներին պատուիրում է գետեղել գմ-նոցներում: Այս պատճառով անբաժնետ է, որ բժիշկները կարողանան որոշել մէկը միւսից: Զննելով այդ խնդիրը, The Lancet բժշկական թերթի խմբագրութիւնը համաձայնում է դրկտոր Ջոնսի հետ, թէ յիշաւի այդ խնդրի լուծումը շատ դժուար է, եւ պահանջում է որ օրէնքը փոխուի այն մտքով, որ սովորական հարեցողները, որոնք թէեւ զեռ խնկագարուած չեն, այնու ամենայնիւ նոյնպէս գրկուին ազատութիւնից, աչքի առաջ ունենալով այն վնասը, որ նորա հասցնում են իրենց ընտանիքներին եւ հասարակութեանը: Այդպէս ազատութիւնից զրկելը, թերթի կարծիքով, ոչ թէ բռնութիւն կը լինէր, այլ ընդհակառակը ծմարիտ բարեբարութիւն բոլոր հասարակութեան համար:

1896 թ. առաջին կիսամիակին Գերմանիայի համալսարաններում եղել է 29,747 ուսանող, իսկ 1895 թ. նոյն ջըջանում եղել է 29,107 ուսանող:

Ուսանողները համալսարաններում քաժանուած են եղել հետեւեալ կերպով.

Բեռլին 4649 հոգի: Միւնխեն 5777 հ.: Լէյպցիգ 2876 հ.: Բոնն 1865 հ.: Բրեսլաւ 1425 հ.: Հայլէ 1115 հ.: Փրայսբուրգ 1579 հ.: Վիւրցբուրգ 1284 հ.: Տիւրինգեն 1172 հ.: Հայդելբերգ 1164 հ.: Երլանգեն 1158 հ.: Գեոտտինգեն 1007 հ.: Մարբուրգ 965 հ.: Գրայֆսվալդ 948 հ.: Ստրասբուրգ 958 հ.: Ծնա 764 հ.: Կիլ 708 հ.: Կեօնիգսբերգ 700 հ.: Գիսսեն 650 հ.: Ռոստոկ 500 հ.: Միւնստեր 448 հ.:

Ըստ ֆակուլտետների այդ թիւը քաժանուում է հետեւեալ կերպով.

Աստուածաբանական (կաթոլիկ) 1782: Աստուածաբանական (բողոքական) 2646: Իրաւաբանական 8075: Բժշկական 7834: Փատմական—լեզուագիտական 5584: Մազգիտական եւ մաթեմատիկական 2989:

Կեանքը լուսնի վրայ. — Աստղաբաշխական դիտողութիւնները հետզհետէ համոզում են գիտնականներին, թէ լուսինը ջըջապատուած է մթնոլորտով: Նկատուած է, որ լուսնի շուրջ կողմը մասախլապատ է եւ աղբամուղ է երեւում, որ յառաջ է գալիս լոյսի անդրադարձումից գալային մարմնի մէջ: Գրիւնիչի դիտարանում վաղուց դիտել են, որ լուսնի յետեւը ծածկուող աստղերը երկու վայրկեաշաշափ անելի երկար են երեւում, քան թէ պէտք է երեւային: Այս եւ նման դիտողութիւնների հիման վրայ հաշուել են նոյն իսկ, որ լուսնի մթնոլորտը 200 անգամ անելի թեթեւ պէտք է լինի երկրի մթնոլորտից:

Պրոֆեսսոր Պիկկերինգ ենթադրում է, թէ լուսնի մակերևոյթը ծածկուած է ջրային շուրջ մասախլապով: Նա գտնում է նոյնպէս, որ լուսնի մակերևոյթի վրայ նկատուած օձապտոյտ գծերը, նման մեր քարտէշների վրայ նկարուած գետերին—գետեր են: այդպիսի գետեր նա հաշուել է մինչեւ 55 հատ, զանազան մեծութեան: Այժմ հաստատապէս ընդունուում է, որ լուսնի վրայ կան գետերի հոնքեր, սակայն այնքան նեղ, որ եթէ նրանց մէջ ջուր մնացած է լի լինի, մննք ոչ մի կերպով նկատուել չենք կարող: Նոյն պրոֆեսսորն ապացուցանում է, որ լուսնի մակերևոյթի վրայ լուսակամութիւն պէտք է լինի: Յայտնի է, որ լուսնի վրայ կան ընդարձակ հարթութիւններ: գիտնական Նէյսօնը նկատել է, որ լուսնի լուսնի ժամանակ այդ հարթութիւններից շատերի վրայ երեւում են գողջագողի, համարեա սեւ գծեր եւ շուտով կորչում են: Լուսնի ժամանակ արեգակի ծառազայթները ուղիղ ընկնում են լուսնի տեսանելի երեսի վրայ եւ պայծառ լուսաւորում են նրա բոլոր մասն-